Հավելված N 1
<<ԳՀԱՊՁԲ-ՀՀԿ-21/20>> ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

# ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Գնանշման հարցմանը մասնակցելու**

<<Սվետան>> ՍՊԸ -ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել _<< Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն >> ՊՈԱԿ -ի կողմից « ԳՀԱՊՁԲ-ՀՀԿ-21/20» ծածկագրով հայտարարված_գնանշման հարցման 1-9-րդ չափաբաժիններին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:
<< Սվետան >> ՍՊԸ -ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ:

- հարկ վճարողի հաշվառման համարն է` `00212858
- էլեկտրոնային փոստի հասցեն է` svetan6162@gmail.com
- գործունեության հասցեն է` ք. Երևան, Ա.Ավետիսյան 12 , բն 6
- հեռախոսահամարն է` 093 26-34-85
- Սույնով << Սվետան >> ՍՊԸ -ն հայտարարում և հավաստում է, որ`

1) բավարարում է << ԳՀԱՊՁԲ-ՀՀԿ-21/20>> ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում.

2) « ԳՀԱՊՁԲ-ՀՀԿ-21/20» ծածկագրով գնանշման հարցմանն մասնակցելու շրջանակում`

- թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,
- բացակայում է գնանշման հարցման հրավերով սահմանված` <<Սվետան>> ՍՊԸ -ին փոխկապակցված անձանց և (կամ) << Սվետան >> ՍՊԸ -ի_կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս << Սվետան >> ՍՊԸ-ին պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք.
- ստորև ներկայացնում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավելի քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ)** և հավաստում, որ իրական շահառուների մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավաստի տեղեկություններ:

| Անունը<br>Ազգանունը<br>Հայրանունը | ՀՀ քաղաքացիների համար նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը | Օտարերկրյա քաղաքացիների համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը |
|---|---|---|
| Իվետտա Գլուշանյան Միխայիլի | նույնականացման քարտ N 010869501 տրված 13.11.2019թ 004 կողմից | |

Կից ներկայացվում է <<Սվետան>> ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համաձայն հավելված 1.1-ի:

<< Սվետան >> ՍՊԸ-ի Տնօրեն Ի.Գլուշանյան ----------------------------

[1] Եթե կիրառվում է սույն հրավերի 1-ին մասի 2. 4 կետի 2-րդ նախադասությամբ նախատեսված կարգավորումը, ապա << պարտավորվում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում.>> բառերը փոխարինվում են <<վերջինս կամ սույն ընթացակարգի շրջանակում վերջինիս կողմից` որպես պաշտոնական ներկայացուցիչ, մատակարարվող ապրանքներն արտադրող կազմակերպությունը, հայտերը բացելու օրվա դրությամբ ունի միջազգային հեղինակավոր կազմակերպությունների (Fitch, Moodys, Standard & Poor's ) կողմից շնորհված վարկունակության վարկանիշ առնվազն Հայաստանի Հանրապետությանը շնորհված սուվերեն վարկանիշի չափով:>> բառերով: Ընդ որում նշվում է նաև վարկանիշի չափը և վարկունակության վարկանիշ ունեցող կազմակերպության անվանումը: